

# Ը Ն Դ Լ Ա Յ Ն Վ Ո Ղ Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը ակտիվորեն համագործակցում է ՍՍՀՄ ԳԱ, եղբայրական հանրապետությունների ակադեմիաների, ինչպես նաև մի շարք միմիստրությունների, գիտական հիմնարկների և բուհերի հետ: Վերջին տարիներին համագործակցության պայմանագրեր են կնքվել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի, տիեզերական հետազոտությունների, ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտների, Բելոռուսիայի ակադեմիայի պինդ մարմնի ֆիզիկայի և սյլ գիտական հիմնարկների հետ: Այդ համագործակցությունը ընդգրկում է պինդ մարմնի ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, ռադիոաստղագիտության, էլեկտրոնային ավտոմատիկայի կարևոր ուղղություններով ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական համատեղ հետազոտությունները:

Նշենք դրանցից ամենակարևորները. Բելոռուսիայի գիտությունների ակադեմիայի պինդ մարմնի ֆիզիկայի ինստիտուտի հետ համատեղ աշխատանքներ են կատարվում մագնիսական ճյուղերի ենթամիլիմետրային սպեկտրոսկոպիայի բնագավառում: Մեզ մոտ ուսումնասիրվում են սեփական մագնիսական հատկություն ունեցող ճյուղերի՝ օրթոֆերիտների հատկությունները, որոնք աճեցվել են Բելոռու-

սիայի գիտնականների կողմից՝ ոչ փոխադարձ տարրերի ստեղծման նպատակով:

Լայն համագործակցություն է ծավալվել ռադիոաստղագիտության բնագավառում: ՍՍՀՄ-ում ամենամեծ ՌԱՏԱՆ-600 ռադիոդիտակի վրա տեղադրված քվանտային ուժեղացուցիչների օգնությամբ, որոնք ստեղծվել են մեր ինստիտուտում, Բյուրականի և հատուկ աստղաֆիզիկական դիտարանի մասնագետների հետ համատեղ, ուսումնասիրվում է տիեզերական մագերային աղբյուրների ակտիվությունը:

Ինստիտուտում ստեղծված մագերների կիրառման շնորհիվ ռադիոդիտակի ընդունող համակարգի զգայնությունը ավելացել է մեկ կարգով: Դա հնարավորություն է տվել ստանալ մի շարք նոր ռադիոաստղագիտական տվյալներ. մասնավորապես, հայտնաբերված են նոր մագերային աղբյուրների բռնկումներ:

Ինստիտուտում մշակված բարձր զգայնության ռադիոընդունիչ սարքերի օգնությամբ ռադիոաստղագիտական տարբեր հետազոտություններ են իրագործվում Գորկու պետական համալսարանի ռադիոֆիզիկական գիտահետազոտական ինստիտուտի հետ համատեղ: Դրանց արդյունքում հայտնաբերված է Խեցգետնաման միգամածության թաղանթի ռադիոնառազայթումը: Նշված սարքերը օգտագործ-

վում են նաև «Վեներա-Հայլեի գիսաստղ» ծրագրի շրջանակներում: Այստեղ լայն ծավալի աշխատանքներ են կատարվում տիեզերական հետազոտությունների ինստիտուտի, ՍՍՀՄ ԳԱ ֆիզիկական ինստիտուտի, Ղրիմի աստղադիտարանի հետ:

Երկրի բնական ռեսուրսների ուսումնասիրման նպատակով ՍՍՀՄ ԳԱ ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի համագործակցությամբ ստեղծվում է ռադիոմետրական համալիր, որը տեղադրվելով տարբեր տիպի թռչող օբյեկտների վրա, թույլ կտա նաև զբաղվել եղանակի տևական կամ խառնուրդային: Նման հետազոտությունները ինստիտուտը կատարում է բնական ռեսուրսների ուսումնասիրության պետական գիտահետազոտական կենտրոնի հետ:

Բարձր զգայնության ռադիո և էլեկտրոնային ավտոմատիկայի սարքերի մշակման ու ստեղծման բնագավառում ըստացված արդյունքների ծամանակին և արագ ձեռքբերման նպատակով ինստիտուտը համագործակցում է միութենական մի շարք ճյուղային հիմնարկների հետ: Այդ խընդիրների լուծման համար ստեղծված են միասնական ստորաբաժանումներ, որոնք ձգտում են ամբողջ կերպ բարձրացնել մշակումների արդյունավետությունը:

## Է. ԱՍՄԱՐՅԱՆ

Հայկական ՍՍՀ, ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտության գծով դիրեկտորի տեղակալ



Հայկական ՍՍՀ ԳԱ, Երևանի ինստիտուտի հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչ, Հայկական ՍՍՀ ԳԱ, ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանն իր աշխատասենյակում: Լինելով խոշոր մասնագետ, նա միաժամանակ գիտության հմուտ կազմակերպիչ է: Մեծ է պատմաբանի վաստակը հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրման և այդ բնագավառում կադրերի պատրաստման ուղղությամբ: